ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բանկի կողմից պատրաստված տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվող

2011թ-ի ընթացքում «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ), հետևելով իր կողմից ընտրված առաջընթացի ու դինամիկ զարգացման ռազմավարությանը և մատուցելով ժամանակակից, բարձրակարգ և որակյալ բանկային ծառայություններ, շարունակել է արդեն իսկ ձևավորված իր՝ որպես կայուն, ապահով և հուսալի գործընկերոջ գործելակերպը, ամրապնդել և բարելավել է ՀՀ բանկային համակարգում իր առաջատար դիրքերը:

Արդյունքում, 2011 թվականին շարունակվել են նախորդ տարիների զարգացման միտումները, և Բանկն ապահովել է հետևյալ արդյունքները.

- ✓ կապիտալի աճ՝ ի հաշիվ կանոնադրական կապիտալի աճի և շահույթի ապահովման,
- ✓ ակտիվների շարունակական աճ,
- ✓ վարկային պորտֆելի զգալի աճ,
- ✓ հաճախորդներից ներգրավված ավանդների աճ,
- ✓ առաջարկվող բանկային ծառայությունների ընդլայնում,
- ✓ պլաստիկ քարտերով գործառնությունների շուկայում ակտիվ գործունեության ծավալում,
- ✓ սերվերային պահուստային կենտրոնի ստեղծում,
- ✓ մասնաճյուղային ցանցի համալրում ու զարգացում:

Այս ամենը նպատակաուղղված է եղել հաճախորդների սպասարկման որակի կատարելագործմանն ու պահանջմունքների բավարարմանը, ինչի մասին վկայում են Բանկի հաճախորդների քանակի էական աճը. 2010թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հաճախորդների թիվը կազմում էր 45,090, իսկ արդեն 2011թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 58,997, որից 56,581-ը՝ ֆիզիկական, իսկ 2,416-ը՝ իրավաբանական անձիք են:

2011թ-ի հուլիսի 19-ին Բանկի բաժնետեր «Քրիսթի Մենեջմենթ» ընկերությունը, «Ուկրպրոմբանկ»-ից ձեռք բերելով վերջինիս բաժնեմասը, դարձավ Բանկի միակ բաժնետերը, իսկ դեկտեմբերի 19-ին համալրեց Բանկի կանոնադրական կապիտալը 4,050,000 հազ. դրամով: Արդյունքում, Բանկի կանոնադրական կապիտալը կազմեց 17,500,000 հազ. դրամ: 2011թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն կանոնադրական կապիտալի մեծությամբ ՀՀ բանկային համակարգում զբաղեցրեց 3-րդ տեղը:

2011 թվականի ընթացքում Բանկն ապահովել է 893,375 հազ. դրամի շահույթ: Կանոնադրական կապիտալի համալրման և շահույթի ապահովման արդյունքում Բանկի ընդհանուր կապիտալը նախորդ տարվա համեմատ աճել է մոտ 29%-ով՝ կազմելով 22,532,524 հազ. դրամ:

2011 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատ, Բանկի ակտիվներն ավելացել են 43%-ով՝ 31.12.2011թ-ի դրությամբ կազմելով 167,137,901 հազ. դրամ, զգալիորեն աճել են հաճախորդներին տրված վարկերն ու փոխատվությունները՝ մոտ 41%-ով՝ կազմելով 108,741,959 հազ, դրամ, իսկ հաճախորդներից ներգրավված միջոցներն աճել են մոտ 57%-ով՝ կազմելով 94,228,848 հազ. դրամ:

2011 թվականին Բանկի գործունեությունն ուղղված է եղել իր հաճախորդներին միջոցների ներգրավման շահավետ պայմաններ առաջարկելու և կայուն ռեսուրսային բազան ընդլայնելու նպատակի իրագործմանը: Հաճախորդների կողմից վստահության ապացույց է այն, որ 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներից ներգրավված միջոցների մոտ 58%-ը (54,605,228 հազ. դրամ) ժամկետային ավանդներ են, վերջիններս նախորդ տարվա համեմատ աճել են 44%-ով:

Հաճախորդների համար վարկերի լայն տեսականի և առավել մատչելի վարկային պայմաններ ապահովելու նպատակով՝ 2011 թվականի ընթացքում Բանկը շարունակել է համագործակցել մի շարք հեղինակավոր կազմակերպությունների վարկային ծրագրերի հետ:

Ինչպես նախորդ տարիներին, 2011 թվականին ևս Բանկն իրականացրել է տնտեսության ակտիվ վարկավորում. ձեռնարկությունների վարկավորման ծավալներն էլ ավելի ընդլայնելու նպատակով 2011 թվականին Բանկը շարունակել է վարկեր տրամադրել *Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն (ՓՄՁ ՁԱԿ) հիմնադրամի «ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման» ծրագրի, Գերմանահայկական Հիմնադրամի «Տնտեսության կայունացման վարկավորման» և «Վերականգնվող էներգիայի զարգացում» ծրագրերի, Եվրասիական Զարգացման Բանկի «ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսավորում» ծրագրի, ՀՀ կենտրոնական բանկի «ՓՄՁ ֆինանսական միջոցների հասանելիություն» ծրագրի* և *Արցախի Ներդրումային Հիմնադրամի ծրագրերի* շրջանակներում: Արդյունքում, 2011թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից տրամադրված վարկերի ու փոխատվությունների 63%-ից ավելին (69,263,197 հազ. դրամ) տնտեսության զարգացմանը նպատակաուղղված

իրավաբանական անձանց տրամադրված բիզնես վարկերն են: Վերջիններս նախորդ տարվա համեմատ աճել են 42%-ով:

2011 թվականի ընթացքում Բանկը շարունակել է տրամադրել համեմատաբար ցածր տոկոսադրույքներով հիփոթեքային և գյուղատնտեսական վարկեր *Գերմանահայկական հիմնադրամի «Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացման» ծրագրի (KFW), «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ-ի «Հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման» ծրագրի, «Բնակարաններ երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ-ի «Երիտասարդ ընտանիքներին մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» և «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ծրագրերի, Հայաստան-Հայաստան ՊՈՒԱԿ-ի «Ջրից դեպի շուկա» ծրագրի, Հայաստանի Ամերիկյան Համալսարանի «Թրփանջյան գյուղական համայնքների զարգացման» ծրագրի և ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի «ԼՂՀ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում:*

2011 թվականի ընթացքում Բանկը շարունակել է ընդլայնել մատուցվող ծառայությունների ցանկը, սկսել է իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում (ֆակտորինգ), American Express ճանապարհային չեկերի և Habib Bank-ի բանկային չեկերի վաճառք, ներդրվել են առարկայագրուկ մետաղական հաշիվների բացման ծառայությունը, Internet-Banking և Mobile-Banking ծառայությունները:

2011 թվականի ընթացքում պլաստիկ քարտերով գործառնությունների շուկայում ակտիվ գործունեություն ծավալելու արդյունքում Բանկը մեծացրել է իր կողմից տրամադրված պլաստիկ քարտերի քանակը 8,525-ով՝ դրանց թիվը դեկտեմբերի 31-դրությամբ հասցնելով 43,890-ի, այդ թվում՝ ԱրՔա, VISA International և MasterCard վճարային համակարգերի պլաստիկ քարտերի քանակը համապատասխանաբար կազմել են 19,941, 15,045 և 8,904: 2011թ-ին Բանկը ստացել է VISA International վճարային համակարգի լիիրավ անդամի կարգավիճակ:

Բանկն ընդլայնել է նաև շահագործվող POS-տերմինալների, բանկոմատների և արտարժույթի փոխանակման մեքենաների ցանցը՝ դրանց թիվը համապատասխանաբար 149-ից, 93-ից և 53-ից հասցնելով 199-ի, 101-ի և 59-ի:

2011 թվականին Բանկը գործարկել է հանրապետությունում իր համարժեքը չունեցող SIGMA Spa ընկերության արտադրության SC800 մակնիշի Ինքնասպասարկման մեքենաներ, որոնք իրականացնում են ինչպես արտարժույթի փոխանակման մեքենայի, այնպես էլ բանկոմատի գործառույթներ:

2011 թվականին Բանկում սկսել է գործել բարտապանների սպասարկման շուրջօրյա ծառայությունը:

2011 թվականին աշխատանքներ են տարվել փաստաթղթային ընթացակարգերը և տեղեկատվական գործառնությունները ISO 27001-2005 ստանդարտներին համապատասխանեցնելու ուղղությամբ: ISO 27001-2005-ի և ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան 2011թ-ին ստեղծվել է սերվերային պահուստային կենտրոն, որը տեղակայված է Վանաձոր քաղաքում, վերջինս թույլ կտա ապահովել Բանկի բնականոն գործունեությունը արտակարգ իրավիճակների ժամանակ:

Certification International (UK) Limited կազմակերպությունը, որը 2010թ-ին Բանկին շնորհել էր ISO 9001:2008 Որակի կառավարման հավաստագիր, 2011թ-ին արդեն երկրորդ անգամ իրականացրեց տարեկան աուդիտ՝ վերահաստատելով Բանկի գործունեության համապատասխանությունը ISO 9001:2008 Որակի կառավարման միջազգային ստանդարտներին:

Բանկը, ծառայությունների մատուցման աշխարհագրությունը ընդլայնելու և դրանք հաճախորդների ավելի լայն շրջանակներին հասանելի դարձնելու նպատակով, վարում է ինչպես մասնաճյուղերի ցանցի ընդլայնման, այնպես էլ գործող մասնաճյուղերի գործունեության արդյունավետության բարձրացման և սպասարկման որակի կատարելագործման քաղաքականություն: Միայն 2011թ-ի ընթացքում բացվել է Բանկի երեք մասնաճյուղ՝ ՀՀ տարածքում՝ «Ազատակ» և «Աբովյան» մասնաճյուղերը, իսկ ԼՂՀ տարածքում՝ «Ծուշի» մասնաճյուղը: Իրականացվել է նաև Երևան քաղաքում գործող «Խորենացի» և «Նորք Մարաշ» մասնաճյուղերի հասցեափոխություն, վերջինս անվանափոխվել է «Երևան» մասնաճյուղի:

Խորհրդի նախագահ		Արմեն Հակոբյան
Խորհրդի անդամ		Ալիկ Չիրկինյան
Վարչության նախագահ		Արա Կիրակոսյան
Գլխավոր հաշվապահ		Ռուզան Խաչատրյան